ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«4» օգոստոսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-77/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Արվատեկ» ՍՊԸ-ի 18.07.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Արվատեկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 18.07.2016թ. ներկայացրած բողոքով «Արվատեկ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Երևանի Մխիթար հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/3-3-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայ-

նագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում գործել է ոչ իրավաչափ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ: Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Այս դեպքում Ընթացակարգը 2016թ. մայիսի 19-ի թիվ 5 որոշմամբ հայտարարվել է չկայացած:

Ընկերությունը գտնում է, որ այս պայմաններում չկա որևէ խոչընդոտ դադարեցնելու (ոչ իրավաչափ ճանաչելու) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2016թ. կայացված «Արվատեկ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումը, քանի որ գնման ընթացակարգն ավարտվելուց հետո պայմանագիր չի կնքվել, այլ հայտարարվել է չկայացած:

Ընկերությունը հայտնել է, որ 10.05.2016թ. «ՇՀԱՊՁԲ-15/3-3-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է նույն Ընթացակարգի հրավերի օրինակելի ձևի պահանջներին համապատասխան մասնակցության հայտ:

Հրավերի օրինակելի ձևի N 4 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը 2-րդ չափաբաժնի համար.

(ՀՀ դրամ)

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը(տառերով և թվերով)
1	2	3	4	5	6
2	Բունվինիլ (լայնությունը՝ 83սմ, գույնը՝ կապույտ կամ սև)	145500	16500		162000 (մեկ հարյուր վաթսուներկու հազար)

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.05.2016թ. որոշում է կայացրել, որ Ընթացակարգի բոլոր մասնակիցների, այդ թվում և «Արվատեկ» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: Դրանից հետո 2-րդ չափաբաժնի համար ավելի ցածր գին ներկայացնելու հանգամանքը հաշվի առնելով՝ Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Սակայն այս դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել խախտում, քանի որ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Իսկ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Փաստորեն այս դեպքում, Ընկերությունն Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան է ներկայացրել հավելված N 4 գնային առաջարկը, քանի որ սխալ է այն լրացրել և շեղվել է նախատեսված հրավերի օրինակելի ձևից՝ նշելով գնման առարկան և տեխնիկական բնութագիրը, որի իրավունքը փաստորեն չուներ:

Որպես բողոքի իրավական հիմք, Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 45-րդ հոդվածը, 31-րդ հոդվածի 1-ին մասը և Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը, որովհետև հիշյալ հանձնաժողովը պարտավոր էր մերժել Ընկերության հայտը՝ Ընթացակարգի հրավերին անհամապատասխան ճանաչելու հիմքով:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դիմել է «Արվատեկ» ՍՊԸ-ին և հայտնել, որ վերջինս որպես 2-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, ներկայացնի հրավերով պահանջվող հավելված N 5 առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, ինչից հետո Ընկերությունը 12.05.2016թ. ներկայացրել է նույն ապրանքի անվանումը, որը նշվել է հայտի գնային առաջարկում: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.05.2016թ. արձանագրել է, որ «Արվատեկ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար որպես համարժեք ներկայացված ապրանքը՝ համարվել է հրավերի տեխնիկական բնութագրին ոչ համարժեք: Բայց այս դեպքում Պատվիրատուն հաշվի չի առել այն փաստը, որ նախորդ տարի նույն ապրանքը ներկայացնելու ժամանակ Ընկերության ապրանքը համարվել է համարժեք և կնքվել է պայմանագիր, այն պարագայում, որ Պատվիրատուն կրկին պահանջել էր 110սմ, իսկ Ընկերությունը ներկայացրել է 83սմ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Արվատեկ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել (ոչ իրավաչափ ճանաչել) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 10.05.2016թ. կայացված որոշումը՝ Ընկերությանը 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին, իսկ տվյալ պահանջը չբավարարելու դեպքում՝ Ընթացակարգը հայտարարել ապօրինի, քանի որ Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

2. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 27.07.2016թ. թիվ 09/1689 գրությամբ «Արվատեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/3-3-2016(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2016թ. ժամը 11:00-ին կայացված նիստում հաստատվել է վերոնշյալ ծածկագրով Ընթացակարգի հրավերի տեքստը:

Ղեկավարվելով Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 37-րդ կետի դրույթներով՝

ա) Ընթացակարգի հրավերը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում, որի արդիականության ժամկետ է սահմանվել 28.04.2016թ.-ից մինչև 10.05.2016թ. ժամը 11:00-ն:

բ) Հրավերի էլեկտրոնային եղանակով միաժամանակյա ծանուցումն ուղարկվել է Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին՝ apranq-15-3@shh.gnumner.am էլեկտրոնային փոստի միջոցով:

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2016թ. մայիսի 10-ին ժամը 11:00-ին: Վերոհիշյալ գնման ընթացակարգի N 2 չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել թվով 2 մասնակից:

Կարգի 47.1 կետի դրույթներին համապատասխան՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում և միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվել է վերոհիշյալ գնման ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 44-րդ կետի դրույթներին համապատասխան՝ գնահատվել են մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և 2016թ. մայիսի 10-ի ժամը 11:00-ին կայացած նիստում ամփոփվել են գնահատման արդյունքները և հայտարարվել են 1-ին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները:

Պատվիրատուն Կարգի 47-րդ կետի դրույթներին համապատասխան՝ տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն 1-ին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ, որին ի պատասխան՝ 2016թ. մայիսի 12-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրվել է եզրակացություն:

Պատվիրատուն ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման փաստաթղթերը:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. մայիսի 16-ին ժամը 12:00-ին կայացված նիստում հաստատվել է, որ «Արվատեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին:

Կարգի 51-րդ կետի դրույթներին համապատասխան՝ ծանուցվել է «Արվատեկ» ՍՊԸ-ին այն մասին, որ մինչև 2016թ. մայիսի 17-ը ժամը 13:00-ն ներառյալ շտկի առկա անհամապատասխանությունները, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում դրանք չեն շտկվել:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներին համապատասխան՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 17.05.2016թ. ժամը 13:00-ին կայացված նիստում մերժվել է «Արվատեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և փաստաթղթերի ներկայացման պահանջ է առաջադրվել «Հայկարլի» ՍՊԸ-ին:

Ընկերության տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկություններն ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայկարլի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցել է այդ գնումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, Կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներին համապատասխան՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Հայարկլի» ՍՊԸ-ն հրավիրվել է բանակցությունների, սակայն չի ներկայացել:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի դրույթների համապատասխան՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինները հայտարարվել են չկայացած:

3. <u>ԳԲԽ-77/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-77/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման

նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/3-3-2016 (ԵՊԲՀ) ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) 2-րդ (Բունվինիլ) չափաբաժնին մասնակցելու նպատակով 10.05.2016թ. հայտ է ներկայացրել «Արվատեկ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերով N 4 հավելվածը՝ գնային առաջարկ պահանջվել է ներկայացնել հետևյալ ձևով.

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>				
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>				
...	...				
...	...				

3. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետով նշվել է, որ գնման առարկա է հանդիսանում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերումը, որի 2-րդ չափաբաժնի անվանումը սահմանվել է՝ «Բունվինիլ»:

4. «Արվատեկ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 2-րդ (Բունվինիլ) չափաբաժնին մասնակցելու նպատակով 10.05.2016թ. ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածը՝ գնային առաջարկը ներկայացրել է հետևյալ տեսքով՝

(ՀՀ դրամ)

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը (տառերով և թվերով)
1	2	3	4	5	6
2	Բունվինիլ ***(լայնությունը՝ 83սմ, գույնը՝ կապույտ կամ սև)***	145500	16500		162000 (մեկ հարյուր վաթսուներկու հազար)

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 1.5 կետի համաձայն՝ «ՇՀԱՊՁԲ-15/3-3-2016 (ԵՊԲՀ)»

ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցող բոլոր ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանել են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

6. Ըստ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 3-րդ կետի, որոշում է կայացվել Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արվատեկ» ՍՊԸ-ին:

7. Պատվիրատուն 11.05.2016թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2016թ. թիվ 2 որոշմամբ 2-րդ չափաբաժնով «Արվատեկ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, միաժամանակ առաջարկելով մինչև սույն թվականի մայիսի 16-ը ժամը 10:00-ն ներկայացնել Ընթացակարգի հրավերով պահանջվող հավելված 5-ը՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը: Պատվիրատուն նշել է նաև, որ սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում Ընկերության հայտը կմերժվի:

8. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող հավելված N 5 տեխնիկական բնութագրով, 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի անվանումը սահմանվել է՝ «Բունվինիլ», տեխնիկական բնութագիրը՝ ***լայնությունը՝ 110սմ***, գույնը՝ կապույտ սև մանր խաղերով, չափման միավորը՝ մետր:

9. Ընկերության կողմից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով նախատեսված «Բունվինիլ» ապրանքատեսակի համար սահմանվել է տեխնիկական բնութագիրը՝ ***լայնությունը՝ 83սմ***, գույնը՝ կապույտ կամ սև:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունը, 16.05.2016թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.3 կետով որոշել է «Արվատեկ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար որպես համարժեք ներկայացված ապրանքը համարել հրավերի տեխնիկական բնութագրին ոչ համարժեք, իսկ 2-րդ կետով առաջարկել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

11. Համաձայն «Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի» գծով պատասխանատու ստորաբաժանման 13.05.2016թ. գրության՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով նախատեսված «Բունվինիլ» ապրանքատեսակի համար Ընկերության կողմից

Ընթացակարգի հայտով ներկայացրած տեխնիկական բնութագիրը համարժեք չէ Ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին:

12. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.05.2016թ. ժամը 13:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով որոշել է մերժել «Արվատեկ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար ներկայացված հայտը:

4. <u>ԳԲԽ-77/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Արվատեկ» ՍՊԸ-ի 18.07.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 27.07.2016թ. թիվ 09/1689 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «ՇՀԱՊՁԲ-15/3-3-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են ***հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը*** կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ ***գնային առաջարկը*** կամ հայտի ապահովումը ***ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կենտրոնը գտնում է, որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի հավելված N 4 գնային առաջարկը ներկայացվել է ***հրավերի պահանջներին անհամապատասխան,*** քանի որ նշված հավելվածի աղյուսակի 2-րդ՝ ապրանքի անվանումը սյունյակում նշվել է ոչ միայն չափաբաժնի անվանումը (ինչպես պահանջվել էր հրավերով), այլ նաև առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը: Մինչդեռ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 1.5 կետի համաձայն՝ «Արվատեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատվել են որպես Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող, ինչի արդյունքում նույն արձանագրության 3-րդ կետով «Արվատեկ» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունը, 16.05.2016թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.3 կետով որոշել է «Արվատեկ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար որպես համարժեք ներկայացված ապրանքը համարել հրավերի տեխնիկական բնութագրին ոչ համարժեք, իսկ 2-րդ կետով առաջարկել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.05.2016թ. ժամը 13:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով որոշել է մերժել «Արվատեկ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար ներկայացված հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.05.2016թ. ժամը 13:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով որոշել է մերժել «Արվատեկ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի համար ներկայացված հայտը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում, հիմք ընդունելով առկա անհամապատասխանությունը, Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պետք է մերժեր Ընկերության կողմից ներկայացված հայտը այդ փուլում, սակայն շարունակել է ընթացակարգը:

Կենտրոնն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ «Արվատեկ» ՍՊԸ-ի հայտը՝ գնային, առաջարկը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով՝ նշված փուլում ենթակա էր մերժման, սակայն չի մերժվել և շարունակվել է ընթացակարգը:

Այսպիսով, Կենտրոնը գտնում է, որ «Արվատեկ» ՍՊԸ-ի 18.07.2016թ. բողոքով ներկայացրած Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 3-րդ կետով Ընկերությանն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու մասին պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Արվատեկ» ՍՊԸ-ի 18.07.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 3-րդ կետով Ընկերությանն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-77/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան